

ՄԵԼՍ ՍԱՆԹՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՅՆՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆԸ

«Կյորես»-ում Ակսել Բակունցը կերպարաստեղծման մոր միջոցներ է կիրառում հենվելով հատկապես ազգային հին, պատմական-գեղարվեստական քրոնիկոնի ժամանակի ավանդների վրա, չնայած քաջածանոթ էր նաև մյուս ժողովորդների միջնադարյան քրոնիկոններին, անգամ իսպանական միջնադարի Ալֆոնս 10-րդ Գիտնական թագավորի կազմել տված «Խորհիկա ջեներալին» (13-րդ դար):

Գրողների առաջին համագումարի ելույթում Ակսել Բակունցը զարգացրեց «Հիտերատորնայա գազետա»-ի հարցազրուցում արծարծած իր մի քանի մտքերը: Գրողը առաջարկում էր վերադարձնայի դեպի ժողովրդական ստեղծագործության սկզբանաբրյուրները, որը հետագայում, իրենից հետո, ստացավ գիտական հետևյալ բնորոշումը. «Վերադարձնայի դեպի ուսալիզմի նախահիմքերը»:

Համագումարում Բակունցը նշում է. «Ժանրի հարցի կապակցությամբ պետք է ասեմ, որ մեծ հետաքրքրություն է Աերկայացնում գեղարվեստական պատմական քրոնիկոնի ժամանակը: Հայկական պատմական քրոնիկոնների վիթխարի քանակությունը բոլորովին չի օգտագործված գեղարվեստական գրականության կողմից: Մեր գրողների պարտականությունն է՝ քննել, ուսումնասիրել դրանք, քննադատորնեն վերցնել այնտեղից էպիկականությունը, արտահայտման խորհրդական լեզվի գունեղությունը, արտահայտչական հարցատությունը, բառերի ժլատ տնտեսումը, որոնք չափազանց բնորոշ են գեղարվեստական քրոնիկոնի համար»¹:

Հայ միջնադարյան գեղարվեստական գրականության էպիկական ազգային գործերը հիմնականում զարգացել են այս ժամանի ոլորտում: Բակունցը դրանք նկատի ուներ, ինչպես նաև ավարտվող իր «Կյորես»-ը, որը գեղարվեստական քրոնիկոնի ժամանի «երգիծական» տարատեսակի ամենափայլուն դրսնորումներից մեկն է ո՛չ միայն քրոնիկոններով հարուստ հայ գրականության մեջ:

Որքանո՞վ է Բակունցի «Կյորես»-ը շրջանակվում գեղարվեստական քրոնիկոնի ժամանի ընդգրկման շառավակի մեջ: Նախ՝ երգիծական բնույթը կամ միտումն արդեն «Կյորես»-ն ուղարկի ձևով հեռացնում է պատմական քրոնիկոնի ժամանից: Բայց քանի որ երգիծանքը «Կյորես»-ում գեղարվեստական միջոց է և ոչ թե գեղարվեստական նպատակ՝ այդպիսին է միջնորդավորված, հետևանքային, հեռանկար ձևով, հետևաբար երգիծանքը չի կարողանում ամրողովվի խախտել երկի ժամանակին հիմքերը:

«Կյորես»-ում սույն են պատմական հավաստի թվերն ու փաստերը (թվական երեք փաստ կա ընդամենը), որովհետև Բակունցին հետաքրքրում է ոչ թե ժամանակային հա-

¹ Ակսել Բակունց, Երկեր, Բա. Բ, Երևան, 1979 թ., էջ 610:

վաստի դեպքերի ու իրադարձությունների հաջորդականությունը, այլ, ինչպես մեզ հուշում է՝ ստեղծագործության բնարանը, հետինակին հնտաքրքրում են որոշակի ժամանակահատվածի (19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի) իր հայրենի քաղաքի բարքերն ու կենցաղը, ուստի «Կյորես»-ում շեշտադրում կատարված է այդ ժամանակահատվածի հասարակական կյանքի շերտերի վրա: Սակայն սա չի նշանակում, որ նաև Հովհաննես Թումանյանից ենող իր հճախատիս ունալիքմի մեթոդով ստեղծագործող հեղինակը չէր կարող իր պատկերած բարքերի հիմքում ու հետևում չտեսնել սոցիալական բնեուացումներ և հասարակական հնչեղություն ունեցող խնդիրներ: Տեսնում է և այն էլ ինչպիսի՞ք:

Բակունցի «Կյորես»-ը, որպես գեղարվեստական քրոնիկոնի ժամանակ մոռուշ, ունի մի շարք առանձնահատկություններ: «Կյորես»-ի պատումը կարծեք թե ոչ սիստեմավորված, ոչ պատճառահետևանքային ու «անտրամաբանական» շարադրանք է: Ոճական ու կոմպոզիցիոն այս յուրահատկությամբ էլ ապահովվում է «Կյորես»-ի և պատմական քրոնիկոնի ժամանակին արտաքին, ծևական հնանությունը: Սակայն պատմական քրոնիկոնից «Կյորես»-ը շատ է տարբեր: «Կյորես»-ում ստեղծագործական թեմատիկ հիմնական թիրախը կենցաղն է, և պատմական անցքեր ու իրադարձություններ համարյա չկան: Եթե կան էլ, ապա դրանց հետահար արձագանքները սոսկ և ոչ թե բուն իրադարձությունները:

«Կյորես»-ում Բակունցը մի բառով, փոքրիկ մի դիպվածով ստեղծում է դիմանկարներ՝ երբեմն տիպականի աստիճանին հասցնելով գրանց, ովքեր իրենց էռությամբ ներդաշնակ են ու նովական, բայց կենցաղային վարքագծով առանձնացված են ու տարբեր իրարից: Այս ասպարեզում Ակսել Բակունցը գեղարվեստական աղերսներ ունի մեր էպոսի ու Հակոբ Պարոնյանի կերպարաստեղծման արվեստի հետ:

«Կյորես»-ում Բակունցը կատարում է կերպարների բնեուացում, բայց սա ոչ թե ոռման-տիզմի ստեղծագործական մեթոդին հասուն կերպարային հակադրության դրսնորում է, այլ կերպարների ուսականական խմբավորում, ըստ դասակարգային պատկանելության միաժամանակ կենցաղային վարքագծով համապատասխանաբար դասդասված:

«Կյորես»-ի անհատականությունները կարծես թե ձուլվում են իրար՝ չկորցնելով իրենց անհատականը, և այդ ձուլման հետևանքով ստեղծվում է հավաքականի, իմա՝ դասի, դասակարգի, հասարարական շերտի կերպարը: «Կյորես»-ում ստեղծվում է հասարարական զանգվածի հավաքական կերպարը՝ նոր կերպարությունը, գործառնությունը ու ուսմիկները՝ իրարիկները, իրենց համապատասխան ենթաշերտերով: Սա էլ դարձալ գալիս թումանյանական ավանդներից:

Բակունցն օգտագործում է երգիծանքի բոլոր տեսակներն ու միջոցները: Կենցաղային թեմքի վրա գրողը պատկերում է իր ընդգրկած ժամանակաշրջանի անցքերը և այս ամենով ստեղծում է իր լեռնաշխարհի 19-րդ դարավերջի ու 20-րդ դարակազբի քաղաքական, հասարակական դրության նորրը ու կատարյալ համայնապատկերը՝ խոտացված կերպարային համակարգում: Բակունցը ցուց է տալիս, որ ժամանակի ընթացքում փոխվում են առևտորի ձևերն ու դասերը, տիպերը, բայց թալանի օրենքները, աշխատավորին «կլավելու» օրենքները նովակ են մնում:

«Կյորես»-ում Բակունցն օգտագործում է քնարական շեղում հիշեցնող, մի ինչ-որ գեղարվեստական հավելում տեսք ստացած, բայց քրոնիկային «չոր ու ցամաք» պատում

մոնուունությունը խախտող, այդ պատումին ու կերպարմերին գեղարվեստական կենսական լիցք տվող «նովելներ», որոնցից են ծով Օհանի ֆաբրուլան, ծմակի Խաչու և Հայաստանի Ավետիսի պատմությունները, ինչպես նաև առևտրական մի քանի տների մասին բիուսված պատկերները՝ իրենց ամբողջականացնող ու կենտրոնական կերպարմեով, որոնք հեղինակային չափման արդյունք լինելով, նաև պյուժետային օժանդակ «լրացումների» հետևանք են:

«Կյորես»-ի պյուժեն զարգանու է հեղինակային պատումով, իսկ պատումի անցքերի ու դեպքերի, էթիկայի հնքանատիա «փիլիսոփայական քարը» Աթա ապոր կերպարն է, որը հանեն է գալիս և որպես դեպքերի մասնակից, և՝ այդ դեպքերի գմահատման «կատեգորիկ իմպերատիվ»:

«Կյորես»-ի կերպարաստեղծման պոետիկայի հիմքային յուրահատկությունը կերպարի կառուցման «քեկորված» կամ քրոնիկ եղանակն է: «Կյորես»-ի կերպարաստեղծման պոետիկայի առանձնահատկություններին անդրադառնում է գրականագետ Ս. Բողոսյանը «Ժամանակակից հայ արձակը» գիտական աշխատությունների ժողովածուում տեղ գտած իր «Ողբերգաերգիծական վեպի ուղղությունը» հոդվածում գրելով. «Երկիր Նաիրի» վեպի ապամերուսականացված «բնակիչների» կերպարային համակարգին առանձին արձագանքեց Ակսել Բակունցը, բայց՝ յուրովի: «Կյորես» վիպակը չունի գլխավոր հերոս: Բակունցն իր նկարագրած քաղաքը բնակեցրեց «մտացածին» քաղաքացիներով, որոնք հիշեցնում էին չարենցյան ֆոն և կոլորիտ ստեղծող բնակիչներին: Այսպիսով Բակունցը Զարենցից հետո կատարեց երկրորդ քայլը՝ հրաժարվեց «գլխավոր հերոսից» (Էջ 155):

Գրականագետն այսպիսի կարծիք առաջարելով՝ արդյո՞ք չի անտեսում մի նուրբ դիտարկում, որը ժամանակին կատարել է վաստակաշատ գրականագետ, պրոֆեսոր Սուրեն Աղարարյանը: «Եղիշե Զարենց» երկիրատորանոց մոնումենտալ մենագրության մեջ, քննելով վեպի ժամրային առանձնահատկությունները և կատարելով ճշտումներ նախակինում հայտնված կարծիքներում (Մ. Չարինյան և այլն), Սուրեն Աղարարյանը Զարենցի «Երկիր Նաիրի»-ն համարում է «վեպ գաղափարի վերաբերյալ» և առանց որևէ երկրնորանքի Նաիրի գաղափարն իր մեջ խտացրած ստեղծագործությունը հոչակում է «պոեմանման վեպ»:

«Երկիր Նաիրի»-ն, իրու ժամրային ձև, ավանդական-կանոնիկ վեպի ուղղակի հակադրությունն է: Ո՞չ կենսագրական, ո՞չ սոցիալական-հոգեբանական, ո՞չ էլ կենցաղային ու ընտանեկան վեպի ավանդական-սյունետային ձևերը, որոնցից օգտվում էին Զարենցի նախորդներն ու ժամանակակիցները, չէին կարող իրենց կառուցվածքի մեջ տեղադրել Երկիր Նաիրիի գաղափարախոսությունը: Անհրաժեշտ էր վեպի այսպիսի ձև ու կառուցվածք, որ համարժեք լիներ «գաղափարական վեպի» մտահացմանը: Գրական հնարագիտությամբ միշտ զարմացնող Զարենցն այս անգամ ևս գտավ գեղարվեստական առաջադրությամբ համապատասխանող նոր կառուցվածք, ժամրային նոր ձև²:

Ելնելով այսպիսի հիմնավոր նախադրույթներից և առաջարելով նորանոր գիտական կովանաներ՝ գրականագետը մեկնում է նաև «պոեմանման վեպի» գլխավոր հերոսի կնճոտ

² Ս. Աղարարյան, Եղիշե Զարենց, գիրք Ա, Երևան, 1973, էջ 431:

իսնդիրը. «Նորից հարց է ծագում. ո՞վ է վեպի գլխավոր այն հերոսը, որ հանդես գալով իրքն գաղափարակիր՝ արտահայտում է հեղինակի կողմնորոշումն ու մարդական իդեալը:

Այդ հերոսն իմբը՝ հեղինակն է, որ հանդես է գալիս որպես վեպի գլխավոր գործող անձ և կրօռու ու սուր վեճ է վարում հայ հասարակությանը հուզող նյութի շուրջը:

«Երկիր Նահրին» Զարենցի գաղափարական բանավեճն է»³:

Ի լրացրումն Զարենցի, Բակունցը «Կյորես»-ում գլխավոր հերոս հեղինակին հավելում է մի այլապիսի կերպարային հիմք, ինչպիսին է Ալեա ապերը:

Ակսել Բակունցի կերպարաստեղծման արվեստում կարևոր դեր է ստանձնում դետալը (մանրամասը): Քանի որ կերպարաստեղծման հարցում ևս քրոնիկոնը, միջոցների կիրառման առումով, դարձյալ ժամանակակից է, ուստի և այդ ժամանակակից էլ թերապրում է դետալի գեղարվեստական մեծ բեռն ու տարրողությունը:

Կերպարաստեղծ դետալների դերն ու տեղն, իրոք որ, մեծ է նովելում, գեղարվեստական քրոնիկոնում, իսկ Բակունցի «Կյորես»-ում պարզապես դետալների առատություն է: Դետալային քրոնիկոն է «Կյորես»-ը (Պարան-պարան Ավանեսի համար բարձր տոնայնության ձայնը, Գյուրջի Օրի՝ լեզուն, Ղաթրինի Աղալո՛ փահլևանությունը, մատադի ծուխը, հայ տերտերի շունն ու ուսաց եկեղեցու զանգի ձայնը, ֆրանգուղով Բադալ ապոր ձեռքի ափը և այլն): Դետալը անվանակոչման մեջ խտացած՝ ամբարի կատու Սողոմոն, Գորիսի անտեր ու տիրավոր շները, քոծերը, Գորիսի ձայները որպես կերպարաստեղծ դետալներ:

Բակունցն օգտագործում է պատկերավորման միջնորդավորված եղանակը և շների օգնությամբ ամբողջացնում է նրանց տերերի կերպարները՝ կիրառելով դետալիզացիոն պորտրետիզացիայի դժվարին միջոցը: Եվ եթե սրան էլ գումարվում է նաև մետամորֆոզի արգիծական տեսակը, ապա որքան է բարդանում կերպարաստեղծման բակունցյան արվեստը: Այս ամենն տեր ու տիրակալը գեղարվեստական քրոնիկոնի հեղինակն է, հեղինակ, որի կարևորագույն հատկանիշն է դառնում իր ստեղծագործական օբյեկտիվությունը:

Գրականագետ Ս. Բողովյանը նկատում է. «Ակսել Բակունցի պատումի մեջ նպատականական ծաղրը արտահայտվեց ոչ միայն հերոսների ընտրության (ագահ, վաճառական, կաշառակեր, վարչարար, միամիտ գյուղացի և այլն), այլև հեղինակի կիրառած ոճականի անցումներով՝ ծաղրական հնչերանգից քնարականի, զավեշտից՝ ողբերգականի: Ակունցը սինթեզի չի ասաւ, նրա «Կյորես»-ի մեջ տեղ գտած երգիծական և քնարական նովազանական կառուցվածքները գոյակցեցին կողք-կողքի, «անխառն» վիճակում» (էջ 160): Մշ կարծիքով, Բակունցի «Կյորես»-ը գեղարվեստական քրոնիկոն է՝ տարեգրություն, ուսի և ուրիշ է նրա լեզուն, ու նման սինթեզի կարիքը չկար:

Գեղարվեստական քրոնիկոնում յուրովի դրսնորում է ստանում հեղինակի կերպարը՝ որպես «քացակայող ներկա»: Որպես գեղարվեստական տարեգիր-պատմիչ, նա պետք է դրսնորի միտումնավոր օբյեկտիվություն՝ պատկերվող, գեղարվեստական շրջանառութ-

յան մեջ դրված դեպքերի ու դեմքերի մկատմամբ: Որպես հեղինակ՝ նրա միտումներն ու շահագրգոռությունները չպետք է երևան: Այսինքն՝ նա պետք է «բացակայի» ստեղծագործությունից: Իսկ որպես այդ դեմքերին ու դեպքերին ականատես ու մասնակից, որպես գրող-տարեգիր, նա պետք է դրսորդի նաև իր գեղարվեստական միտումը՝ գեղագիտական իդեալի հրամայականով, այսինքն՝ պիտի որ ներկա լինի իր ստեղծագործության մեջ:

Բացակայող ներկա, որը գեղարվեստական քրոնիկոնի հեղինակի տեղին ու դերին հաղորդում է նոր կշիռ ու ծանրություն, ստեղծում հեղինակի ուշագրավ ու քարտ մի կերպար, որը կառուցվում է արդեն կերպարաստեղծման ինքնատիպ ու նոր ինքնաշափումով:

Իր «Կյորես»-ում Ակսել Բակունցը պատվով է լուծել այդ խնդիրը, մտել է նման կերպարի մեջ, ու քակունցյան այդ նվաճումը դադարէ է արձակի մարզում գեղարվեստի բարձունքային չափանիշ: